ԱՐԵՒԵԼՔԻ ՏԱՂԵՐ

ԱՌՏՈՒ

Այգը լացեր է ծոցը վարդերուն,
Ո՞վ գիտէ որ սէգ պարիկին սիրոյն.
Երկինք հոգ ձրգած է լոյսով, շողով,
Ջուրին մէջ երգեր կաճ սիրախրոով.
Կը սպասէ ադբիւրն ծարուած շրթներու,
Սրբանուէր հուրն է տեսնչանքն ապրելու.
Հողը կը խլրտի սերմերով բեղուն.
Գրգանք է կապեր հովն իր թեւերուն.
Հրայրք, ճառագայթ, խայտանք է չորս դիս...
Ինչո՞ւ ուշխարհը նեղ է իմ սրտիս:

ԻՐԻԿՈՒՆ

Ըստուեր մը կ'անցնի բլրին վրայէն,
Կարաւանն անվերջ կ'երթայ յամրօրէն,
Ուղտերուն շուքը կ'երկարի տարտամ,
Հեռաւոր հրմայքն հորերու խորունկ
Երազել կուտայ *մինարէ*ն ծարաւ...:
Երկրնքէն կ'իջնէ ճանձրոյթ մը անբաւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ Արմ.ՍՍՌ
digitised by A.R.A.R.@

ԳԻՇԵՐ

Վերը ջինջ լուսին,
Լիճն իր հայելին.
Քուն՝ աշխարհն ամէն.
Ձիւնոտ սարերէն
Պաշտում առ Աստուած.
Դաշտերուն սփռուած
Երազի ծրփանք.
Ո՜չ մէկ արձագանգ.
Մարգեր լուսագեղ...
Իմ ցաւս ամէն տեղ:

ՄՈՐՄՈՔ

Շագանակենին ծաղկեր է մինակ.
Հեռուն ծովափին տուն մը կայ ճերմակ.
— Աղջիկ, քու սրտիդ մասնիկը ո՞ւր է: —
— Հոն՝ ուր լուսընկան վարդերը կ'օրրէ...:

ԱՆԱՅԻՍ

digitised by A.R.A.R.@